

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—3 ժամ
(Բացի կիրակի և առիւթ օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանիւր բառի 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱՎԱՆՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԻ ԼՐԱԳԻՐ 1879 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՒԱԴԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՎԵՆ ԷՆՈՒՆԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:

ԸՆՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է գիտել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСТ Редакция „Мшак“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Այս գործում էլ չունանք:—Ն երբին տե-սու թիւն, Նամակ Գերբնդից: Նամակ խմբագրից:—Արտաքին տեսու թիւն: Արդիւ: Ֆրանսիա: Գերմանիա:—(Մշակ) հեռագրից:—Յայտարարութիւններ: Բանասիրական, վարագի և Նարեկի վանքերի գործը:

ԱՅՍ ԳՐԻԳՈՐԱՒԱԴԻ ԵՒ ԶՈՒՇԱ-ՆԱՆՔ

Հուտով պատրաստ կը լինի Թիֆլիսում մի նոր թատրոնական դահլիճ:

Որոշ սիրողները արդէն խոստանում են անցնել այդ թատրոնը, վրաց թատրոնասէրները արդէն պատրաստվում են խաղալ: Դահլիճ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱԳԻ ԵՒ ՆԱՐԵԿԻ ՎԱՆՔԵՐԻ ԳՐԻԾԸ

Այս մի տարի է որ հայրս, գեներալ Երեմիա Արծրունի, վախճանվել է: Ամբողջ տարի զբաղված լինելով նրա գործերով, կարգաւորելով նրա մասնաւոր գործերը, ես գտայ նրա բազմաթիւ թղթերի մէջ մի գործ, որ ազգային և հասարակական բնաւորութիւն ունեւորող, անհրաժեշտ եմ համարում ծանօթացնել հայ հասարակութիւնը այդ գործի էութեան հետ: Դա վաստակաւոր Նարեկի և Վարագի վանքերի գործն է:

Այդ գործի մէջ ես գտայ հետեւեալ թղթերը՝ Թիֆլիսի մի քանի հարուստ անձների ձեռագիր ստորագրութիւնները, որոնցով նրանք պարտաւորվում են նուիրել յօգուտ յիշեալ երկու վանքերի ուսումնարանների, իւրաքանչիւրը 500-ական ռուբլ: Իրիմեան եպիսկոպոսի (այն ժամանակ վարդապետի) գրադրութիւնը հանգուցեալ հօրս հետ, հօրս նամակները ուղղված վանի

լիճը, մենք գրեթէ հաւատացած ենք, վարձված կը լինի գրեթէ ամեն օր:

Իսկ հայերը, որոնք կազմում են իրանց թւով Թիֆլիսի ազգաբնակչութեան կեսից աւելի,—հայերը չեն էլ մտածում պատրաստվել....

Եւր ի՞նչ երեւոյթ է՝ անհոգութիւն է թէ ուրիշ աւելի վատ զգացմունք.... չը գիտենք: Մենք աւելի հակված ենք մտածել որ առաջինն է:

Եւր այն յատկութիւնն է, որի շնորհով հայերը ամեն տեղ և ամեն գործում միշտ ուշ են գալիս:

Հայոց ազգային կառավարութեան անդամներն, նամակներ որոնցով վանի ազգային կառավարութիւնը պատասխանում էր հօրս, հատարմամբ թիւն որոնց յիշեալ ազգային կառավարութիւնը ուղարկած էր հօրս, որպէս զի նա հաւաքի նուիրված գումարը, հօրս պատասխանները, որտեղ նա յայտնում է թէ նրա գործն էր հաւաքել ստորագրութիւններ, բայց նա երբէք չի յանձն առնի փողեր հաւաքելու պաշտօնը, և պահանջում էր որ վանի ազգային կամ հոգեւոր վարչութիւնը ինքն ուղարկի Թիֆլիս մի հաւատարմատարին, որպէս զի նա հաւաքի գումարը: Նամակների հետ հայրս ուղարկեց և մի պատճէն նուիրատուների անունների նրանց ստորագրած գումարի չափը նշանակելով: Իսկականը մնում է գործի մէջ: Գործը սկսված էր 1861 թվին: Վերջապէս թղթերի մէջ գտայ վեհափառ կաթողիկոսի մի կոնդակ և հօրս ձեռագիր յօդուած, 1877 թվին ռուսերէն լեզուով գրած, որից կարելի է ծանօթանալ գործի ամբողջ ընթացքի հետ և որ հանգուցեալը դիտարկութիւն ունէր, ինչպէս երևում է, հրատարակել ռուսաց «Кавказ» լրագրում, բայց ինձ յայտնի չէ ինչ պատճառով, գուցէ արդէն հիւանդութեան պատճառով չը կատարեց իր դիտարկութիւնը:

Մահից առաջ նա ակնարկեց ինձ այդ յօդուածի մասին և խնդրեց ինձ հրատարակել նրան ժամանակով «Մշակ» մէջ:

Մենք յիշում ենք ինչպէս դեռ մի քանի տարի արանից առաջ թատրոնական գործին բարեկամ մի հայ շրջան հաւաքվում էր, խօսում էր, վիճաբանում էր, զիտաւորութիւն ունէր մեծ գումարներ հաւաքել Թիֆլիսում մի գետին գնել, առնված գետին վրա մի թատրոնական, թէև փոքրիկ շէնութիւն կառուցանել, յետոյ թատրոնական բաժանորդական ընկերութիւն հիմնել խումբ կազմել, դերասաններին վարձել և այլն, և այլն....

Ոչինչ չիրագործվեցաւ ի հարկէ: Եւր մի մասնաւոր մարդ թատրոն է շինում, դիցուք մինչև անգամ փող աշխատելու համար: Հասարակութեանը ի՞նչ փոյթ, ինչ նպատակով է կառուցվում թատրոնական դահլիճը: Դահլիճը այնու ամենայնիւ կը լինի, թատրոնասէրների գործը կը հեշտանայ: Նրանց հարկաւոր չէ ոչ գետինը գնել, ոչ թատրոն կառուցանել: Նրանց հարկաւոր է միայն հայոց թատրոնական ընկերութիւնը կազմել, համեմատաբար մի աննշան գումար հաւաքել խումբ կազմել և կառավարել խումբը, ներկայացումներ տալ և ներկայացումներից օգուտներ ստանալ: Ընկերութիւնը պէտք է իր հաւաքած գումարով դեկորա-

ցիաներ և զգեստներ գնի, առաջին ժամանակ, մինչև որ եկամուտը չի լինի, դերասաններին վարձատրի,—և յետոյ, երբ արդիւնք կունենայ մի քանի տարիների ընթացքում յետ դարձնի գումարը բաժանորդներին, թէ կուզ տոկոսներով:

Թող չը նեղանայ Թիֆլիսի հայոց հասարակութիւնը՝ երբ որ մի հասարակութիւն այնքան քրնած է, այնքան անտարբեր է, այնքան անհոգ է, այնքան զուրկ է իր սեփական ինքնիշխանից,—նա չը պէտք է նեղանայ երբ մասնաւոր անձն ստիպված է ամեն բանում ինքնիշխան տալ:

Մենք կը սպասենք: Տեսնենք արդեօք մի քանի տարվայ աղաղակները, թէ մեզ թատրոն է հարկաւոր, անկեղծ էին արդեօք:

Եթէ կը տեսնենք որ այժմ էլ հայոց հասարակութիւնը, երբ թատրոն կայ, շուտով պատրաստ կը լինի, երբ գործը հեշտացրած է և մնում է միայն թատրոնական ընկերութիւն կազմել—այժմ էլ ոչինչ չի անի.... այն ժամանակ թող ներվի մեզ ասել որ վերև յիշված աղաղակները թատրոնի անհրաժեշտութեան վրա անկեղծ չէին:

Միթէ ճշմարիտ են հայերի վերաբերութեամբ մեր Լըռանի թղթակցի խօսքերը՝ հայր սիրում

նակ ես բացարի իմ ծանօթ ունեւոր անձների մէջ մի ստորագրութիւն, յուսալով որ այդպիսով կը հաւաքվի մի աւելի մեծ գումար, քան թէ եկեղեցում հաւաքված դրամները, այն նպատակով որ ձեռք բերած գումարով առնվի վերոյիշեալ վանքերի համար մի անշարժ կայք որի եկամուտով և կը պահպանվին դպրոցները:

Մի քանի օրվայ ընթացքում ստորագրութիւնը հասաւ հետեւեալ դրութեանը՝ Երեմիա Արծրունի 500 ռ., Նիկողայոս Միրիմանեան 500 ռ., Աւետիս Գալստեան Տէր Վրդապետ 500 ռ., Վարդան Արշակունի 500 ռ., Սողոմոն Ղորղանեան 500 ռ., Իշխան Վարդան Արշակունի 500 ռ., Մինաս Աղամյանեան 500 ռ., Յովսէփ Յովհաննիսեան Լեֆեդեան 500 ռ., Ռոմանոս Նաղիրեան 500 ռ., Բարսեղ Արապեան 500 ռ., ընդամենը 5000 ռուբլ: Ստորագրութիւնը կարող էր դեռ շատ երկար ժամանակ շարունակվել և կարող էր հասնել աւելի էլ նշանակալի գումարների, եթէ մի օտարօտի դէպք չը կանգնեցէր գործի ընթացքը:

Վարագի վանքի վարդապետին հայոց հոգեւոր իշխանութիւնը թոյլ էր տուել կարգաւ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում քարոզներ դպրոցի համար գումարներ հաւաքելու համար: Նրա ճարտար քարոզները զբաղում էին եկեղեցիներում բազմաթիւ ունեւորներին: Բայց յանկարծ քարոզներից մինի ժամանակ քարոզչի հետ պատահեց մի դժբաղդ դէպք, երեսնան յանկարծ մի

է միայն պատրաստ սեղանին նըստել....

Մէկ մարդուց ամեն բան չէ կարելի պահանջել:

Բայց ինչպէս ուզում է, թող անի հայ հասարակութիւնը:

Կարող է պատահել որ թատրոնը միշտ բռնված կը լինի կը լինեն վրաց ներկայացումներ, ուստաց ներկայացումներ, կոնցերտներ, դասախօսութիւններ, գրականական երեկոներ, մինչև անգամ պարահանդէսներ և մասկարադներ, զահլեճը կը վարձվի մինչև անգամ հարսանիքների համար, — իսկ հայոց ներկայացումներ այնու ամենայնիւ չեն լինի: Եւ երբ որ հայոց հասարակութիւնը մի քանի տարուց յետոյ նոր կը մտածի հիմեն մի թատրոնական ընկերութիւն և կազմել մի խումբ, — ո՞վ գիտէ, գուցէ այն ժամանակ ոչ մի ազատ օր էլ չի մնայ հայոց ներկայացումների համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԴԻՑ

1 դեկտեմբեր

Դերբենդ քաղաքը չը նայելով իր հազար տարուց անկի գոյութեանը, դարձեալ այսօր անշնան տեղ է բռնում կովկասի մէջ բազմամարդութեան կողմից. ունի այժմ մինչև 2000 տուն բնակիչ, որի մեծ մասը կազմում են թուրքերը և հրէայնքը: Հարկաւորապէս հայ տուն է հաշվում այստեղ և գրեթէ այդպիսի բոլոր ընտանիքը:

Քաղաքը երկու մաս կարելի է բաժանել, հին և նոր. հին մասը, ուր կը գտնուի Դերբենդ բերդը և կը բնակեն թուրքեր և հրէաներ, գաղութայրի վրա շինված է երեսը դէպի ծովը. այս մասի տները բաւականին տեղի, անկանոն և իրարու վրա սեղմուած են, ծուռ ու նեղ փողոցներով, ուր տարվան ամեն եղանակի մէջ առանց բացառութեան կարելի է տեսնել ցեխ, ամենատեսանելի հոգեկան հիւանդութեան նշաններ և նա սկսեց անկապ և անմիտ խօսքեր ասել քաղաքի մէջ: Մի վայրկեանի մէջ ամբողջ եկեղեցին դատարկվեցաւ: Այդ դժբաղդ դէպքը սառեցրեց ժողովուրդը դէպի վարդապետի քարոզները և խախտեց նուիրատուների ջերմեանդութիւնը: Դէպի ստորագրութեան շարունակելը: Քաղաքիչը ստիպվեցաւ անյապաղ թողնել մեր երկիրը և վերադառնալ իր հայրենիքը: Տարաւ նա արդեօք իր հետ եկեղեցիներում հաւաքած գումարները թէ ոչ, գործ դրեց նա արդեօք այդ գումարները միայն իր վանքին, թէ երկու վանքերին, — ինձ յայտնի չէ: Բայց միւս վարդապետը, Նարեկի վանքի վանահայրը մի քանի օրից յետոյ ներկայացաւ ինձ, խնդրելով ինձ օգնել նրան փողով, որ կարողանայ վերադառնալ իր երկիրը, որովհետև նրա ասածով ընդունվին զուրկ էր մնացել միջոցներէր: Ես օգնեցի նրան իմ սեփական միջոցներէր, որպէս զի նա կարողանայ վերադառնալ վանք:

«Նրա գնալուց առաջ ես խորհուրդ տուցի նրան որ ներկայացնի վանի ազգային կառավարութեանը գործի ամբողջ ընթացքը և զրդի նրան շտապել ուղարկել թիֆլիս մի հաւատարմատար, որ կարողանայ հաւաքել նուիրատու պարոններից իրանց ստորագրած գումարը: Բայց վանքում չը կարողացան կամ չուզեցան գործ տեսնել:

«Այնու ամենայնիւ չը կամենալով որ իմ

սակ կեդոտութիւններ, իրենց արտադրած գարշահոտութեամբ, իսկ նոր մասը բաւականին հանաւոր ձեռով շինված է և հնազանդ կը շինվի, միայն դժբաղդաբար թէ բարեբաղդաբար այս մասի փողոցները ևս զուրկ չեն կեդոտութիւնից և լճացած ջրերից:

Դերբենդից առ հասարակ շատ վայրկեայոր են նայում քաղաքի այդ տեսակ պակասութեանց վրա. հասարակ ժողովուրդը ենթադրեց թէ չէ հասկանում ինչ վնասներ կարող են յառաջանալ դրանից, հասկացողը և ծայր ունեցող մարդիկ քննեցին, քննու չեն դիմում նրան, ում որ հարկն է պէտք եղած դարմանը անելու, չէ որ իրենք էլ նոյն օրն են ծծում և նոյն տեղերը պտտում:

Դերբենդից հայերը պարագում են այդեզործութեամբ, տարին միջին թիւով 40,000 վերջողին է դուրս գալիս այստեղից և ծախվում կովկասի դանաղան քաղաքներում: Վաճառականութիւնը հայոց և թուրքաց ձեռքն է առաւելապէս:

Հայերը ունեն մի եկեղեցի, մի քանապ և մի ապանի օրիորդաց դպրոց. արական սեռի դպրոց չը լինելու համար տղայք քաղաքական դպրոցի մէջ են սովորում:

Մեր քաղաքի լուսաւորութեան ամենազգաւոր տարրը համարված է ընտանիքների մէջ ուսուցիչներ խօսելը, հայ ազգանունների վերջից իչով և օվով բնուածութիւնը. աղջիկ պարոնների և երիտասարդների բամբ, ստուկոյիս և այլ մօզնի խաղեր խաղալը, ունայն խօսքերով և վիճաբանութեամբ զիտնական և աղգասէր ձեռնալը, մեծածախ խնջոյքներ անելը, մեռելի յուզարկաւորութեան և պսակի ժամանակ մուգիկա անելը տալը և այլն և այլն: Ես կարծում եմ լաւ կանէին մեր քաղաքացիք եթէ աւելորդ փող ունեն գործ անեն հասարակաց օգուր համար. ստեպ օտեպ խնջոյքներ տալուց ինչ չա՛հ, լաւ չէր լինի կիսով չափ կրճատվէին այդ անօգուտ ծախքերը և այն ծախսովի փողը գործ դնէին օրիորդաց դպրոցի ներքին դարդարանքի համար, այն ժամանակ չէ թէ մի քանի աղգականներ ու բարեկամներ կարախանային, և այլ ամբողջ հասարակութիւնը:

Դերբենդի մէջ անելու բաներ շատ կան և շատ բան կարելի է յառաջանել, եթէ առաջնորդող անձ լինի: Այս օրերս մեր մէջ արծաթծվում է օրիորդաց դպրոցի բանալու խնդիրը. մեր առաջին անկիւղը պիտի լինի նրա գոյութիւնը ապահովելու. միջոցներ գտնելը, և այդ դժուար չէ իմ կարծիքով եթէ սէր և կամք ունենանք: Եթէ հարկը տանից 50 տուն բարեհաճեն տարեկան միջին թիւով 25-կան բուք տալ դպրոցին, կը լինի 1250 ռ., 750 ռ. ևս կարելի է ժողովել տեղիս օտարական հայ վաճառականներից, տարին երկու երեք անգամ թատրոնի ներկայացումից և վիճակախաղից յառաջացած արդիւնքից: այդ երկու հաղթար բուքով կարելի է թէ 30—40 օրիորդների պահել, ունենալով երկու ուսուցիչ, մի վերականգնող, մի ծառայ, թէ հոգալ ուսումնարանի ներքին պիտոյք:

սկսած գործը դադարի, որ ստորագրված գումարը կորչի վանի ուսումնարանների համար, որ այնտեղի դպրոցները օգուտ քաղեն գտնէ այն գումարից, որի վրա կանգ առաւ ստորագրութիւնը, ևս վճարել արթնացնել վանի աղգային կառավարութիւնը իր քնած դրութենից և յուլիսի 17-ին 1864 թիւն ուղարկեցին նրան մի պաշտօնական իմ անունից նամակ, կցելով նրան ստորագրողների անունների և նրանց ստորագրած գումարի պատճէնը, առաջարկելով որ վանից ուղարկվի թիֆլիս մի հաւատարմատար ստորագրողներից անմիջապէս փողերը ստանալու և այդ գումարով վանի դպրոցներին համար մի անշարժ կայք գնելու համար: Բայց վանի աղգային կառավարութեան անդամները պատասխանեցին ինձ նոյն թիւի 23 հոկտեմբերին դրած հաւատարմագրով, որ հասաւ իմ ձեռքը 1865 թիւի մարտի 2-ին, ստորագրված տասն և վեց հոգեւորական և աշխարհական անձնիքներից, որով նրանք ինձ պատիւ էին անում նշանակել ինձ իրանց հաւատարմատար փողերը հաւաքելու և գործը վերջացնելու համար: Պարոնները պէտք է հասկանային որ ես միայն սկզբնապատճառ էի ստորագրութեան, ստորագրողներից մին և վանի հայերի բարեկամ, և նրանց վայել չէր դարձնել ինձ իրանց գործակատար, փողերի հաւաքողը և նրանց դպրոցի համար անշարժ կայքը: Դեռ ոչ Այդ պատճառով ես ստիպված էի պապականութեան նրանց նոյն թիւի մարտի

ները և թէ մի բան աւելացնել դրամագլխի վրա:

Անցեալ կիրակի օրը նոր երեցփոխի ընտրութիւն եղաւ դպրոցի դահլիճում. ընտրվեցաւ պ. Գ. Խ. Շահնազարիանց. կը յուսանք որ դպրոցի ներքին և արտաքին բարեկարգութեանց համար ևս կը հոգայ:

Դերբենդի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 7 դեկտ.

Անուանալի ճշմարտութիւն մ'է որ ազգի մը յառաջդիմութիւնը ընթերցասիրութիւնից կախված է, որով մէջ պիտի փայլի դարեւոր ազդեցութիւնով խաւարած, հայ ազգի նոր հորիզոնէն երկնոյ երկնային ապագայն, նա պիտի փրկէ նախապաշարմունքների մէջ ծնուած, մօլութեան օգիտով շարուած հայը. եւանդ տայ, խրախուսէ դէպի նուիրական պարտք մը:

Գարսայ հայ հասարակութիւնը որ երկու տարի է վեր պատերազմական դաշտի մէջ գտնուելով, տանկաց կառավարութեան ժամանակ ամեն բան ձրիապէս տուաւ նոյն զօրաց, ուստաց լիազօր աշխուժեան ժամանակ որչափ որ աշխատեցաւ, բայց դժբաղդաբար իւր աշխատութեան արդիւնաւոր պտուղը, ունեցած փողը դրամագլխի խոլի հանդերձ վերջի հրդեհի զոհ և ճարակ տուաւ, որով շատերը զրկուեցան իւրեանց նիւթական կարողութենէն. բայց ասոր հետ միասին, դպրոցի և դրամարանի կարեւորութիւնն անհրաժեշտ համարելով բացին ուսումնարան և դրամարան, չը խնայեցին իւրեանց լուսնային միջոցներ աղքատ և հարստահարուած ժողովուրդ մ'էին, չը կարողացան իւրեանց այս փափաքը լրացնել լիովին, ուստի հրաւիրագրով ուղարկեցին զմեզ Ի Տփլիս, դիմել բարեխիտ ազգայնոց և նոյն ազգօգուտ օժանդակութեամբ պսակել իւրեանց նպատակը որը ամբողջ ազգի վերաբերել անուրանալի է: Արդէն հրաւերի պատճէնն ալ ձեր ազգօգուտ լրագրոյ № 208-ի մէջ հրատարակած էիք:

Ինչպէս որ իմ ներկայս ալ կարեւոր օգնութեան կարօտ սրտին թարգման հանդիսանալով շնորհակալաց հաւաստիքը կը մատուցանեմ տեղեայ ազգասէր ժողովրդոց որոնք չը զլացան ձեռնառու լինի պսակելու այսպիսի նըպատակ մը ի պարծանս ազգին որը ես,

«Փորձի» խմբագիր Աբգար Յովհաննիսեան
8 հատոր «Փորձ» եւամսեայ հանդէս 2 տարվան, 100 հատ «Ազատ երգեր»

Կենտրոնական գրավաճառանոց

10 «Բերականութիւն մայրենի լեզու» Պալասանեան, 5 «Մայրենի լեզու» Տէր-Ղևոնդեանցի ա. բ. և գ. մաս. 1 բացատրութիւն «Մայրենի լեզու», 5 վանդոյթ, 10 Օրացոյց 79 թուի, 2 «Գաղղական սահմանադրութիւն» Մանդինեան, 1 Դօն-Քիչօտ

19-ին, բացատրելով նրանց որքան անվայել էր նրանց առաջարկութիւնը, և կրկնելով նրանց իմ կարծիքը որ նրանք չտալեն ուղարկել իրանց հաւատարմատարին թիֆլիս, ես յայտնում էի նրանց իմ միտքը թէ նրանց արածը անհոգութիւն է և ժամանակի կորուստ:

«Չը ստանալով երկու տարի շարունակ ոչ մի պատասխան իմ նամակից, ես հարկեալ համարեցի դիմել վեհափառ Կաթողիկոս Գէորգին, նրա թիֆլիս անցնելու ժամանակ 1867 թիւին, բացատրելով նորին վեհափառութեանը ամբողջ գործի էութիւնը: Նորին Սրբութիւնը պատեց ինձ նոյն 1867 թիւի յուլիսի 1-ին մի կոնգրակով, որով յայտնում էր ինձ, որ թէ և վանի թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Իգնատիոս դիտաւորութիւն ունէր ինքն անձամբ գալ թիֆլիս, բայց իր դիտաւորութեան մէջ արդիւնքների պատահելով, յանձնեց Ղևոնդ վարդապետին գալ այստեղ և վերջացնել գործը:

«Ղևոնդ վարդապետը ճշմարիտ եկաւ թիֆլիս 1867 թիւի յուլիս ամսին, Ս. Էջմիածնից գալով, շտապելով ուղարկել դէպի Կ. Պոլիս, և խոստացաւ շուտով վերադառնալ թիֆլիս, իրան յանձնած գործը վերջացնելու համար: Բայց էլ չը վերադարձաւ և գործը անկատար մնաց:

Հօրս այդ յօգուածին ես իմ կողմից ոչինչ չուներ աւելացնելու, միայն ընթերցողի ուշադրութիւնը կը դարձնեմ այն հանգամանքի վրա, որ նուիրատու ստորագրողներից ոմանք վախճան

Լամանցից, 2 հատոր «Փունջ» գործ Բաֆիի ա. և բ. հատոր, 1 «Մեծ մարդերի պատմութիւններ», 1 «Նախակրթարան» գիր. Այվազեանի, 1 «Աղբուրդ ֆրիստոնէական հաւատոյ», 1 Շիւլէր Օրէտանի կոյս 1 Շիւլէր Դօն-Կարլոս 1 Լէսսինգ Նաթան իմաստուն:

Ս. Գայեանեան օրիորդաց ուսումնարանէն
20 «Հասարակագիտութիւն Աղբուրդ», 20 ֆիզիքական աշխարհագրութիւն:

Գերապատիւ Տ. Գաբրիէլ արք. Այվազեան

16 «Լսարան» պատմութիւն վարուց մեծին Ներսիսի. 20 «Լսարան» երկինք և երկնային մարմինը, 19—Արեւ և մօլորակներ, 20—Եգիպտոսի հնութիւնները. 4—Խորհուրդք աւագ ուրբաթի, 4—Ս. Զատիկի, 5—Խորհուրդք Ս. Սալ. 4—Ծննդեան և Մկրտութեան ֆրիստոսի. — 17—Խաչատուր: Բայց հայկաբանութեան, 18 Ուղղադրութիւն լեզուիս հայոց, 1 խորմի հայոց լեզուով առականեր. 1 Յաւելուած ի պատմութիւն երկի վարդապետաց. 1 Օրէնք—Վայելուչ կենցաղավարութեան. 5 Անեկդոտներ Գ. Շերմազանեանց:

Մկրտիչ Աղապանին Կ. Պոլսեցի

1 Պատմութիւն Հայոց սկսեալ 1772—1860. 1 Լը Թուոս Գուչէն գաղղիբէն, որոնց ընդհանուր գումարն է 332 կտոր գրքեր:

Ազգասէր տէր կը խնդրեմ ներկայս ձեր ազգօգուտ լրագրոյ մէջ անկիւն մը շնորհել ի դիտութիւն ժողովրդեան, և կը խնդրեմ ազգայնոց որոնք որ այս տեսակ ազգօգուտ ձեռնարկի մը կը փափաքեն, յանձնեն իւրեանց նուիրատութիւնը «Մեղու Հայաստանի» խմբագրատունը, զոր նա անհրաժեշտ մեղ կը հասցունէ:

Որե միամ ձեզ երախտագարտ.

Նշան Պէօխանեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

«Indepen. Belge» լրագրում կարդում ենք հետեւեալը.

«Շուտով Նյադաթոնը մի ձառ կը կարգայ Գլընշվիլում, և առում են որ նա իր ընտրողների առաջ մանրամասնաբար կը լսուէ ազատամիտ կուսակցութեան կազմակերպութեան մասին: Այս ձառը անշուշտ մեծ նշանակութիւն կունենայ որովհետեւ ժողովրդական կարծիքն այն է, որ պարլամենտը շուտով կարճակիւն Արդէն մոռացվել են Բերլինի և Կիպրոսի դաշնագրութիւնները: Ժողովրդական ուշադրութիւնը ծարպկութեամբ քաշեցին Աֆգանիստանի հարցի վրա: Ազատամիտները առում են որ ժողովրդական կարծիքը նրանց

ված են: Ցանկալի է որ գումարը չը կորչի վանի դպրոցների համար, ցանկալի է որ կենդանի մնացած ստորագրողները տան փողը իրանց ստորագրութեան համեմատ, իսկ մեռածների տեղ տան նրանց ժառանգները:

Ես իմ հօր կարծիքի հետ ընդունվին համաձայն եմ որ գումարը հաւաքելու և նրան գործ դնելու գործը պէտք է յանձնված լինի վանի հոգեւոր կամ ազգային վարչութեան կողմից ընտրված մի հաւատարմատարին, որ ի հարկէ առաջին պատահածը չը պէտք է լինի, այլ մի կշիռ ունեցող և յարգանք վայելող անձնաւորութիւն պէտք է լինի:

Գործի մէջ գտած գրագրութեան մասին աւելորդ եմ համարում լինել: Դա գուցէ ժամանակով հետաքրքրել կը լինի մի անձի համար, որ կուզենայ մի քանի յայտնի անձնիքների անաչառ կենսագրութիւնը գրելու: Այդ նամակներից պատմաբանը կը տեսնի մեր հոգեւոր անձնիքների վարմունքի մի օրինակ, կը համոզվի թէ մեր հոգեւորականները միմեանց մէջ եղբայրներ ձեռացնելով մինչև որ աստիճան միմեանց դէմ սե ինտրիգաներ և որդալծներ լարելու, միմեանց բամբասելու ընդունակ են:

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

Հետ համաձայն է, որ նրանք միացել են, որ նրանք կազմակերպված են, որ նրանք պատ-
րաստ են մրցելու Պահպանողականները սրանց
պատասխանում են ասելով որ կաթոլիկ իր-
ւանդացիների կարծիքը դրանց չէ համակրում
և թէ արդի միևնույնությունը աւելի պահ-
պանողական է քան թէ ազատամիտ: Անշուշտ
եթէ մենք վայր ի վերջ հայեացք ձգենք դու-
ծի վրա, և եթէ խորը չը քննենք, պահպա-
նողականներն են աւելի ուժեղ: Բայց թէ ինչ
կը պատահի երբ պատգամաւորների ժողովի
արձակման հրովարտակը կը հրաւիրակի,
դուք այդ կը տեսնեք երբ ընտրողական ժո-
ղովը Բիկոնսֆիլդի ընդհանուր քաղաքակա-
նութեան դիմակը կը հանէ, և նրա հե-
տևանքները երևան կը հանէ: Հեռատես մար-
դիկ արդէն նշմարում են, որ մի ընդհանուր
պարուլթիւն է տիրում բոլոր պարագայու-
մարդոց, և այն ժամանակ ամենքն էլ կը սկսեն
հետզհետե գործից փախչել: Մասնաւոր ընտ-
րութիւնների ժամանակ, արդէն 1874 թւից
սկսած, զգալի կերպով նկատելի է որ ազա-
տամիտները հետզհետե աւելի ու աւելի ձայ-
ներ են ստանում: Եթէ կառավարութիւնը
նորից դիմէր ժողովրդական կարծիքին,
մեծ բան չէր շահի, որովհետեւ ընտ-
րողները բոլորովին գոհ չեն Անգլիայի վար-
մունքից, թէ ճիշդագոյն, թէ Թիւրքիայում,
թէ Բելգիայում, թէ Կիպրոսում, և թէ Աֆ-
գանիստանում: Եւ թող պետական բաղա-
խնդիր մարդիկ միւս անգամ էլ չը յուսան որ
ժողովուրդը դրանց կը տայ իր քուէների մե-
ծամանութիւնը: Այս րուպէիս քաղաքակա-
նութիւնը, վաճառականութիւնը և արհեստա-
ւորները կատարեալ ձգնաժամի մէջ են գտն-
վում: Ռուսաստանի հետ ունեցած վէճերը,
Թիւրքիայի յեղափոխութիւնները, վաճառա-
կանական գործերի ձնուումը, հարկերի շա-
րունակ աւելացնելը, այս բոլորը սաստիկ կեր-
պով ծանրացել են ժողովուրդի վրա:
Ժողովուրդը սաստիկ ահաճութեամբ է նա-
յում անգլո-աֆգանական պատերազմի վրա,
որովհետեւ այդ պատերազմի ծայրում նա
տեսնում է անգլո-ռուսական պատերազմ:
Շատերի կարծիքով սա մի վտանգ է, որ զայ-
ն լրացնում է ժողովուրդին, և որի հետեանքը կը
լինի այն, որ ընտրութիւնները յօգուտ
Բիկոնսֆիլդի չեն լինի, հէնց որա պատճա-
ռով էլ միևնույնների անցեալ խորհրդում
բացառապէս միայն Աֆգանիստանի հարցով
չեն զբաղված: Այս լուրը, որ տպած էր Լոն-
դոնի լրագիրներից մէկի մէջ, միևնույնները
սրա մասին կարծում են, որ կամ ժողովի ան-
դամներին մէկն է մասնել այս լուրը, որ ան-
կարելի էր, կամ լրագիրն ինքն իր կողմից
աշխատում է հաստատ իմանալ ինչ սր ինքը
գուշակել է:

Անգլո-աֆգանական պատերազմի մասին
«Temps» լրագրում կարգում ենք հետե-
ւեալը:
«Բենեդիկտ Բրեոնի մի յայտարարութեանից
երևում է որ գնդապետ Մակ Ֆերսոնի հրա-
մանատարութեան ներքոյ գտնված գունդը
առաջ է գնացել մինչև Բոգալայ, որ գտնվում
է Կուրդ-Քայրեր կոչված տեղից փոքր
ինչ աւելի հեռու: Զօրքը բնակիչներին յայ-
տնեց իր վտահուլութիւնը դրանց բարեկամա-
կան յարաբերութիւնների մասին, և դրան-
ցից պաշարեղէններ ստացաւ: Դակիպում
ամեն բան խաղաղ է: Ալե-Մուսալիի հետ
հարգողականութիւնը նորից սկսվեց:
Աշանայի ձանապարհը մշակեցին ու հար-
թեցին: Գնեւրալ Բօքերտի մասին ոչինչ տե-
ղեկութիւն չը կայ:»
Մի ուրիշ հեռագիր գեկտեմբերի 5 թւով
հաղորդում է:
«Մերէկ Գնեւրալ Բօքերտը մի մեծ յաղթու-
թիւն արաւ: Նա տիրեց Պէյվարի կրճի
ամենաբարձր գագաթին: Պէյվար Կոտային,

և թշնամու բոլոր թշնամութիւնները իր ձեռքին
մնացին:
«Աֆգանները մեծ-մեծ կորուստներ ունե-
ցան: Անգլիացիները թէ մեռած թէ վիրա-
ւորած 80 հոգի կորցրին: Պ. պ. Կէլսոն, թա-
ւորական հրձիգ զօրքի կապիտանը, և Ան-
դերսոն, հետեակ զօրքերի կապիտանը մե-
ռած են:
«Times» լրագիրը կարծում է որ այն
սահմանները, որ Անգլիան կամենում է ունե-
նալ Աֆգանիստանում, դրանց ձեռք բերելու
համար մէկ միլիոն ֆունտ ստերլինգից աւե-
լի չի գնայ: Այս մի և նոյն լրագիրը աւե-
լացնում է, որ եթէ գնեւրալ Բօքերտը յա-
ջողացնէ աֆգաններին քշելու այն դիրքերից,
որ նրանք բռնած են Պէյվարի կրճերում,
կառավարութիւնը արդէն գլխաւորապէս
հասած կը լինի իր նպատակին:»

ՅԻՄՆԱՍԻՍ

«Ֆինանսների միևնույնը, ասում է «Temps»
լրագիրը, շուտով կը ներկայացնի պատգամա-
ւորների ժողովին մի ծրագիր, որով պէտք
է փոփոխել խնայողական դրամագլուխ ժո-
ղովել: Այդ դրամագլուխը կը կազմի մաս-
նաւոր անձինքների և այլ և այլ ժողովների
ու ընկերութիւնների նուիրատուութիւններից:
«Պատգամաւորների ժողովը հանրապետական
անդամները ժողովիցան Կապիտանի փողոցի
վրա գտնված խորհրդակցութեան դահլիճը:
այս ժողովին նախագահում էր պ. Լըբլոնը:
Ժողովը զբաղվեց այն ընտրութիւններով,
որ դեռ մնում են առանց արձանագրութեան:
Այդ առանց արձանագրութեան մնացածներն
են պ. պ. Դավիդին, Աբրաքուսիկին և բարոն
Բէյլը:

«Լիօնի պատգամաւոր պ. Անդրիեոն մի
քանի հետաքրքիր մանրամասնութիւններ հա-
ղորդեց Լիօնում պատահած վերջին անցքերի
մասին: Այս անցքերը, որոնք վերաբերում են
Լիօնի ձեմարանի վարչութեանը, ժողովը վըձ-
ուեց կատարեալ իրաւունք տալ ձեմարանի
ընկաւորին:
«Վրանից յետոյ ժողովը զբաղվեց այն հար-
ցով, որով բնապարտեան ընտանիքը յետ է
պահանջում Կոմպիէյի և Ֆոնտէնբլոյի թան-
գարանները:
«Gazette de France» լրագիրը հրատարա-
կել է պ. Լ. Բիշարի հետեալ նամակը, որը
նա, իր հրաժարականի պատճառով, ուղղել է
ներքին գործերի միևնույնը: Երաւ արդ նա-
մակը:

«Պարոն միևնույնը, կոմ Շամբօրի նամակը,
որ ինչքան բարձր է իմաստութեամբ, նոյն չափ
էլ վսեմ է քրիստոնէական մտքերով և բուն
ֆրանսիական զգացմունքներով, ամեն բարի
քաղաքացուն պարզ կերպով ցոյց է տալի այն
միակ փրկարար ձանապարհը, որով նա պէտք
է առաջ գնայ: Այդ նամակը նրան հարկադ-
րում է հրաժարվել բոլոր նրանցից, որոնք
այսօր այսպէս բռնակալապէս և անարդարա-
բար են վարվում հասարակական և կրօ-
նական նշանաւոր սկզբունքների պաշտպան-
ների հետ:
«Իրանց պարտականութիւնների ամենա-
ջերմեանը պաշտօնեաները, այսօր իրանց
անգոր զբաղով յաղթել չարին և անել այն
ինչ որ բարի է: Եւ պատճառով էլ ես կա-
մենում եմ ձեզ տալ իմ հրաժարականը:
«Պատիւ ունեւմ մնալ Մօրբէհանի կուսակա-
լութեան վարդապետ խորհրդատու Լ. Բիշար
Գարնուր, Վանն 29 նոյեմբեր 1878:
«Progres de Lyon» լրագիրը հրատարա-
կում է հետեւեալը:
«Մենք մեզ երջանիկ ենք համարում, որ
մեր գլխաւոր խմբագիր պ. Վէլլիան Ալեյ-
րակը Բէզանսոնի գիտութիւնների համալսա-
րանի գահերէց է նշանակվել: Այս բարձր
պաշտօնը, պ. Վէլլիան Ալեյրակի համալսա-

րանական երկարատե ծառայութիւնների, և
բազմաթիւ երկարատեական աշխատութիւն-
ների արդիւնքի պտուղն է, և յիշատի նա
բոլորովին արժան է գիտական աշխարհի
մէջ մի այդպիսի պատուաւոր տեղ ընդունե-
լու:

«Աւելացնենք, որ գիտութիւնների համալ-
սարանի այս նորընծայ գահերէցը մի հաստատ
հանրապետական և մի և նոյն ժամանակ կղե-
րականութեան սաստիկ հակառակորդ է:»

«Republican» լրագիրը ասում է որ այս
օրերս պ. Բիւրիէյի փողոցում պատահելով
«Appel au peuple» լրագրի գլխաւոր խմ-
բագիր պ. Լակուրին, նրա երեսին երկու գա-
ւազանի հարուած է խփում:
«Independance Belge» լրագրի Փարիզի
թղթակիցը գրում է հետեւեալ տեղեկութիւնը:
«Կարծում են որ այսօր (2 դեկտեմբերի)
Սենատի նստում ոչինչ առանձին հարց չի լի-
նի վիճելու, բայց և այնպէս պ. Հէրիօլ ա-
ռաջարկեց որ Թրանսիայի բոլոր իրաւաբա-
նական համալսարաններում սահմանադրական
օրէնքի մի ամբիոն լինի: Սրանից յետոյ պե-
տութեան քարտուղարի օգնական պ. Կօլը-
րին ներկայացրեց սենատին պատգամաւոր-
ների ժողովից ստացված ծախսերի ցուցակը:
Յետոյ սենատը նախագահը յայտնեց Շարան-
տի բնապարտեանի սենատօրի պ. Անդրէի
մահվան մասին և յոյս յայտնեց, որ դրա փո-
խարէն յունվարի 5-ի ընտրութիւնների ժա-
մանակ մի ուրիշին կընտրեն:

«Վիճարանութիւնը փոխվեց երկաթուղի-
ների եկամուտների վրա. այդ ժամանակ պ.
Պարիսը, որ մայիսի 16-ին ժողովրդական
աշխատութիւնների միևնույնը էր, խօսք խընդ-
րեց, և ասաց. «Ես այսօր կամենում եմ միայն
մի նկատողութիւն անել սենատը երկու հար-
ցով է զբաղված, այն է արդէն իրագործ-
ված երկաթուղիների եկամուտներով և
այն երկաթուղիների ծրագրով, որոնց մտադ-
րութիւն կայ հիմնել նահանգներում, և որով-
հետեւ այդ երկու հարցերն էլ մի և նոյն ա-
ռարկային են վերաբերում, ուստի ես խընդ-
րում եմ որ այդ երկու հարցերն էլ միաց-
վին:»

Իսկ պ. Լարիշը դրան հակառակ պատաս-
խան տուեց:
Բայց Պարիսը բացարձակապէս մերժեց և
խնդրեց որ այդ հարցի քուէարկութիւնը յե-
տաձգեն գոնէ մինչև դրա մասին եղած մաս-
նաժողովի երկրորդ օրէնքը:
Նախագահը, տեսնելով որ ոչ ոք էլ խօսք
չէ խնդրում ընդհանուր վիճարանութեան
համար, հաշիւ ներկայացրեց այն օրվայ ե-
ղած վիճարանութիւնների մասին:
Փարիզի աստիճական նոր դեսպան պ.
Բէյլստը, ներկայացնելով իր թղթերը հանրա-
պետութեան նախագահին ասաց:
«Իմ օգոստոսիաւ տէր կայսր և թագաւորը
բարեհաճել է ինձ դեսպան և լիազօր նշա-
նակել ֆրանսիական հանրապետութեան մօտ,
պատիւ ունեն ներկայացնել ձեր գերազանցու-
թեան այն նամակները, որոնք ինձ ներկայաց-
նում են այդ հանրապետութեանը, Բաղդաւոր
եմ համարում ինձ, որովհետեւ յանձնարարու-
թիւնս կայանում է նրանում, որ անվստ-
պահեմ այն բարեկամ յարաբերութիւնները,
որոնք գտնվում են Աւստրո-Ռուսարիայի և
Թրանսիայի մէջ, և որով ինձ վրա պարտա-
կանութիւն է դրված աւելի ևս ամրացնել
այն սերտ բարեկամական կապերը, որոնք
միացնում են այդ երկրները: Ես բոլոր իմ
ձիգը կը թափեմ, որ ինձ վրա դրած պար-
տականութիւնները այնպէս կատարեմ, որ
արժանի լինեմ իմ իշխանի վստահութեանը և
գրաւեմ ձեր գերազանցութեան և ձեր կա-
ռավարութեան յարգանքն և համակրութիւ-
նը:»

Հանրապետութեան նախագահը պատաս-
խանեց. «Պարոն դեսպան, ես երջանիկ եմ լսե-
լով ձեզից այն բարեկամական զգացմունքների
արտայայտութիւնը, որով Ն. Մ. Աւստրիայի
թագաւորը ձեզ յանձնել է թարգման լինել
Թրանսիայի առաջ: Պարոն դեսպան, դուք
կարող էք վստահ լինել ինձ և իմ կառա-
վարութիւն վրա, որ կը դիւրացնենք ձեր այն
բարձր յանձնարարութեան արդիւնագործու-
թեանը, որ ձեր օգոստոսիաւ իշխանը հա-
ւատացել է ձեզը:»
ԳԵՐՄԱՆԻԱ
«Temps» լրագրում կարգում ենք հետե-
ւեալ լուրը գերմանական կայսրի վերադարձի
մասին:
«Կայսրը դառնալով երկաթուղու կայարա-
նի ընդունարանում ժողոված մարդոց ասաց.
«Ինչ պէտք է զգաք թէ ինչպիսի այլ և
այլ ապագայութիւնների ներքոյ եմ ես, այս
րուպէիս կանգնած ձեր առաջ, որովհետեւ
դուք էլ ժամանակակից էք եղել այն ցաւա-
լի դէպքին, որ ինձ պատահեց:
«Ենչքան էլ կսկծալի լինէին այն ֆիզիքա-
կան ցաւերը, որ ես կրեցի, այնու ամենայնիւ
նրանք նոյն չափ էլ մեղմ էին որովհետեւ
այդ վէճերը ես ստացայ իմ սեփական մայրա-
քաղաքում և մի պրուսացու ձեռքով:»
«Յետոյ նորին մեծութիւնը, դառնալով
դէպի գլխաւոր քաղաքագլուխը ասաց.
«Ես ձեզ առաջին անգամ եմ տեսնում իմ
տերութեան մայրաքաղաքում ձեր առաջին
պաշտօնով, հետեւաբար և կարող եմ ձեզ
շնորհակալութիւն անել այս մեծահոգեւ
ընդունելութեան համար, որ դուք անում էք
ինձ այս նշանաւոր քաղաքացիների հետ միա-
սին: Ձեր այս ընդունելութիւնը ինձ կատա-
րեալապէս մոռացնել է տալի այն եղեւնագոր-
ծութիւնը, որ կատարվել է իմ դէմ:
«Ես ցանկանում եմ, որ այն համակրութեան
զգացմունքը, որ այսօր քաղաքացիք ցոյց են
տալի ինձ իմ ընդունելութեան առիթով,
երկարատե լինի, և ես վստահ եմ որովհետեւ
այդ համակրական զգացմունքը ոչ թէ մեր
նեղ շրջանում են միայն ինձ յայտնել, այլ և
մեր գերմանական լայնածաւալ հայրենի-
քում:»
«Կայսրը և իր ընտանիքը կառքով մի շրջան
արին քաղաքում, որի տները հոյակապ կեր-
պով լուսաւորված էին:»

Լուի ձեզից այն բարեկամական զգացմունքների
արտայայտութիւնը, որով Ն. Մ. Աւստրիայի
թագաւորը ձեզ յանձնել է թարգման լինել
Թրանսիայի առաջ: Պարոն դեսպան, դուք
կարող էք վստահ լինել ինձ և իմ կառա-
վարութիւն վրա, որ կը դիւրացնենք ձեր այն
բարձր յանձնարարութեան արդիւնագործու-
թեանը, որ ձեր օգոստոսիաւ իշխանը հա-
ւատացել է ձեզը:»

ԳԵՐՄԱՆԻԱ

«Temps» լրագրում կարգում ենք հետե-
ւեալ լուրը գերմանական կայսրի վերադարձի
մասին:
«Կայսրը դառնալով երկաթուղու կայարա-
նի ընդունարանում ժողոված մարդոց ասաց.
«Ինչ պէտք է զգաք թէ ինչպիսի այլ և
այլ ապագայութիւնների ներքոյ եմ ես, այս
րուպէիս կանգնած ձեր առաջ, որովհետեւ
դուք էլ ժամանակակից էք եղել այն ցաւա-
լի դէպքին, որ ինձ պատահեց:
«Ենչքան էլ կսկծալի լինէին այն ֆիզիքա-
կան ցաւերը, որ ես կրեցի, այնու ամենայնիւ
նրանք նոյն չափ էլ մեղմ էին որովհետեւ
այդ վէճերը ես ստացայ իմ սեփական մայրա-
քաղաքում և մի պրուսացու ձեռքով:»
«Յետոյ նորին մեծութիւնը, դառնալով
դէպի գլխաւոր քաղաքագլուխը ասաց.
«Ես ձեզ առաջին անգամ եմ տեսնում իմ
տերութեան մայրաքաղաքում ձեր առաջին
պաշտօնով, հետեւաբար և կարող եմ ձեզ
շնորհակալութիւն անել այս մեծահոգեւ
ընդունելութեան համար, որ դուք անում էք
ինձ այս նշանաւոր քաղաքացիների հետ միա-
սին: Ձեր այս ընդունելութիւնը ինձ կատա-
րեալապէս մոռացնել է տալի այն եղեւնագոր-
ծութիւնը, որ կատարվել է իմ դէմ:
«Ես ցանկանում եմ, որ այն համակրութեան
զգացմունքը, որ այսօր քաղաքացիք ցոյց են
տալի ինձ իմ ընդունելութեան առիթով,
երկարատե լինի, և ես վստահ եմ որովհետեւ
այդ համակրական զգացմունքը ոչ թէ մեր
նեղ շրջանում են միայն ինձ յայտնել, այլ և
մեր գերմանական լայնածաւալ հայրենի-
քում:»
«Կայսրը և իր ընտանիքը կառքով մի շրջան
արին քաղաքում, որի տները հոյակապ կեր-
պով լուսաւորված էին:»

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻՍԱՆՆԵՐ

— ԿԱՐԱՍՈՒԻԲԱՋԱՐ. Զ. Գ. Պ. Զեր պատուի-
րած նամակը ստացանք, բայց նրա մէջ երեք
բուլ չը կար:
— ՄՕԶԴՈՎ. Գ. Պ. Ե. Ապագովագիր ուղար-
կելով և իւրաքանչիւր բաժանորդին բաժանոր-
դագին ստացվելուց յետոյ, Ձեզ էլ կուղարկենք,
երբ կը ստանանք 10 բուլ: «Մշակ» կուղարկենք
եկող տարվանից:
— ՆՈՐ-ՆԱԽԻԶԻԱՆ. Ռ. Պատ. Ստացանք
30 բ. բաժանորդագրեր: Շնորհակալ ենք որ
յանձն էք առել ձեզ մօտ ստորագրութիւն ըն-
դունել:
— ԳՕԻԻ. Տեղացի. Սեպտեմբերի 2-ին ուղար-
կած նամակը ստացանք դեկտեմբերի 10-ին: Հը
նացած է, տպել է կարելի:
— ԵՐԵՒԱՆ. Հին-բարեկամ. Ցաւում ենք որ
ձեզանից այլ ես նամակներ չենք ստանալու:
Դուք պատճառները չէք հաղորդում, բայց մեր
միւս թղթակիցը արդէն գրել է: Թող հաւատա-
ցած լինեն ձեր խնամքները, որ մեր միւս թղթ-
թակիցների գրելները պակաս թղթաւորված չեն
լինի: Մի չարիք արմատից պէտք է հանել, թող
փորձեն, եթէ ոյժ ունեն և երկնոտ նապաստակ-
ներ չեն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՍԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ. 12 դեկտեմբերին Պետա-
կան բանկի 50% տոմսակը առաջին շրջանի
արժէ 96 բ. 55 կ., երկրորդ 94 բ. 75 կ.,
երրորդ 94 բ. 66 կ., չորրորդ 94 բ. 50 կ.,
ներքին 50% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 237 բ. 5 կ., երկրորդ 325 բ.
5 կ., արեւելեան առաջին 92 բ. 75 կ.,
երկրորդ 91 բ. 37 կ., ուկրաին 8 բ. 53 կ.:
Ռուսաց 1 բուլը Լոնդոնի վրա արժէ 23 1/3
պէնս: Տրամադրութիւնը հաստատ է:

